Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/24>> ծածկագրով ՀՀ ոստիկանության Մաշտոցի ոստիկանության բաժնի նոր վարչական շենքի կառուցման, ՀՀ ոստիկանության ՃՈ Սևանի հաշվառման քննական ստորաբաժանման հիմնանորոգման և ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Կումայրիի ՈԲ նոր վարչական շենքի մուտքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 դեկտեմբերի 2017թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս. Մաթևոսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Վ. Առաքելյան/ գնահատող /
	Ն. Մարտիրոսյան/ բացող /
	Ն. Մանուկյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան
Բացակայում էր Հանձնաժողովի անդամ՝	Ա. Քոչարյան /գնահատող/

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ս. Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) Գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Չափաբաժին 1 - ՀՀ ոստիկանության Մաշտոցի ոստիկանության բաժնի նոր վարչական շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ

Սույն չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են հավելված 5.2-ում նշված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին:

2) Չափաբաժին 2 - ՀՀ ոստիկանության ՃՈ Սևանի հաշվառման քննական ստորաբաժանման հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ

Սույն չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են հրավերով պահանջվող նախկինում կատարած N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի հավելվածներ 3-ի և 3.1-ի օրինակելի ձևերը:

գ) Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին և 2-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները և Կարգի 48-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը գնահատել բավարար, հակառակ դեպքում՝ գնահատել անբավարար և մերժել:

դ) 1-ին և 2-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների կողմից սահմանված ժամկետում շտկվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

ե) Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել են յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղն զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս. Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել

Չափաբաժին 1 <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ –ին,

Չափաբաժին 2 <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ-ին,

Չափաբաժին 3 <<ՋԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս. Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 դեմ – 0

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ս. Մաթևոսյան

Անդամ՝ ---------- Վ. Առաքելյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան